

# Ծեփ խմորից. Ի՞նչ է հարկավոր աշխատանքի համար

Աղե խմորի բազմաթիվ բաղադրատոմսեր կան: Օրինակ որոշների մեջ ավելացվում է բուսական յուղ: Սակայն այդ դեպքում իրը յուղոտ մատնահետքերի պատճառ է դառնում: Որոշ բաղադրատոմսերում խորհուրդ է տրվում ավելացնել վինիլալյան սոսիսձ (Էմուլսիա): Նման բաղադրատոմսով խմորի հետ աշխատելուց պետք է շատ զգուշ լինել, քանի որ փոքր երեխաները սիրում են ամեն ինչ համտեսել, իսկ սոսիսձն ինքը թունավոր նյութ է: Մեր բաղադրատոմսը 100% էկոլոգիապես մաքուր, հետևաբար անվտանգ նյութերից է բաղկացած (ջուր, ալյուր և աղ):



## Ալյուր

Ալյուրը բնական նյութ է, որի որակը փոփոխվում է կախված աղացված հատիկի մանրությունից, հատիկի աճի եղանակային պայմաններից և այլն: Աղե խմորի համար նպատակահարմարը ոչ բարձրորակ ալյուրներն են, որոնք ավելորդ վերամշակում չեն անցել, որոնց մեջ չկան հավելյալ նյութեր: Ծեփի համար պարտադիր չէ, որ ալյուրը հագեցած լինի վիտամիններով և փիրեցուցիչներով: Աղե խմորի համար ամենահարմարը ցորենի ալյուրն է: Աշորայի ալյուրից խմորների դեպքում մեծ անցքեր են առաջանում, և այն չորացնելը դժվար է, իսկ խմորը աշխատանքի համար բավականաչափ պինդ է:

## Աղ

Աղը խմորի մեջ ավելացվում է բացառապես կրծողներից ու վնասակար միջատներից պաշտպանելու նպատակով: Այդ իսկ պատճառով դրա մեծ քանակությունն առանձնապես հարկավոր է: Աղի ավելցուկը կարող է չորացումից հետո իրին հաղորդել փխրունություն, որը կհանգեցնի ճաքերի առաջացմանը: Կարելի է օգտագործել ցանկացած որակի աղ:

Հարկ է նշել, որ աղե խմորի հետ աշխատելուց անհրաժեշտ է որոշակի սենյակային ջերմաստիճան: Օպտիմալ ջերմաստիճանը 20°C է: Ավելի բարձր ջերմաստիճանում խմորը արագ կչորանա և խմորը մշակելն ու դետալներն իրար միացնելը կդժվարանա:

*խմորի համար անհրաժեշտ է*

- ալյուր 2 բաժին
- աղ 2 բաժին
- ջուր (պարտադիր սառը) 1 բաժին
- պոլիէթիլենային փաթեթ՝ խմորը պահելու համար

*խմորի հետ աշխատանքի համար անհրաժեշտ է՝*

- փոքրիկ ամանով ջուր՝ մատը կամ վրձինը թրջելու համար
- պլաստմասսե դանակ
- ծեփի տախտակ
- գրտնակ խմորը բացելու համար
- վրձիններ
- ներկեր
- ատամի չոփիկներ
- կլոր ծայրերով մկրատ

և այլն: